

Նկ. 91. Արձ. № 165։

1 Ի ՈՆՁ Թվ. կատարեցաւ ի Քս մեծն
2 Սարգիս, որդի Զաքարէի, թոռն աւ-
3 ագ Սարգսի։ Որդիքս՝ Զաքարէ եւ Իւ-
4 անէ կանգնեցաք զխաչս, յիշեցէք։

## 168. Նույն խաչքարի թիկունքին

### ԺԲ—ԺԴ դդ.

Հրատարակվում է առաջին անգամ

**Փ. Յ. Մ.**

Ծանոթություն.— *Այս սկզբնագրերի միտքը պարզ չէ, բայց գրերը հին են և կարող են սկզբնական փորագրչի կողմից լինել։*

*Կարելի է ենթադրել, որ արձանագրությունը փորագրող և խաչքարը կազմող վարպետի անվան սկզբնագրերն են (անունը, հայրանունը և որտեղացի լինելը)։*

## ԺԳ. ՍԱՆԱՀԻՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱՅՔՈՒՄ

## 169. Գրիգորի Տուտեորդու խաչքարի թիկունքին

(Լուս. № 92)

### Հ ՈՂԳ Մ 1184

Հրատարակված Ե՝ Ջալ 27, Հար 306, Լալ 391, Վիմ 35